# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Հայկ և Նարեկ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/162 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Հայաստան, Չինաստան | 570 հատ պայուսակ լրակազմով, որի մեջ ներառված է. Դպրոցական պայուսակ՝ երկուական դարակներով՝ առանձնացված ամուր շղթայակապաններով /ըստ պայուսակի գույնի/: Պայուսակը կարված լինի բարձրորակ, էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքից գործված չթրջվող կտորից, զերծ տարատեսակ քիմիական նյութերի հոտերից: Հիմնական պատի /հետնամաս/ ներսից լինի միջին խորությամբ շղթայակապանով գրպան: Երկրաչափական չափսերը՝ 20սմ+35սմ+45սմ, վերնամասը լինի կորաձև: Պայուսակի աջ և ձախ կողքերին լինեն բաց գրպաններ՝ շշով հեղուկ տեղադրելու համար: Պայուսակի առջևի մասում առանձնացված լինի միջին չափի մեկ այլ գրպան՝ շղթայափականով, որի ծածկի վրա լինի թափանցիկ գրպան /4սմ+6սմ/՝ նկար կամ պայուսակակրի անուն ազգանունը տեղադրելու համար: Պայուսակի վրա լինի ուսերին կրելու հնարավորություն՝ ուսագոտիներ: Ուսագոտիներն ունենան հարմարավետ փափուկ ներդիրներ: Միևնույն ժամանակ պայուսակն ունենա ձեռքին հարմարեցված կտորե բռնակ՝ ամուր և փափուկ ներդիրով: Պայուսակի գույնը և նկարազարդումը՝ սև, մուգ կապույտ, կարմիր, նարնջագույն՝ հնարավոր գունային հավելումներով: Նկարազարդումները՝ աղջիկնրին և տղաներին համապատասխան: Գրենական պիտույքներ. ընդհանուր տետր 48 թերթանի (վանդակավոր) 6 հատ- հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի |

| | | |
|---|---|---|
| | | տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց, լուսանկարներով, կարելի է նաև միագույն՝ 16x20սմ: Ընդհանուր տետր 48 թերթանի (տողանի) 6 հատ, հաստ ստվարաթղթե շապիկով, նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն, չափսը՝ 16x20սմ: Տետր 12 թերթանի (վանդակավոր) 10 հատ նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն (չափսը՝ 16x20): Տետր 12 թերթանի (տողանի) 10 հատ նկարազարդված Հայաստանի տեսարժան վայրերի նկարներով կամ հայ անվանի մարդկանց լուսանկարներով, կարելի է նաև միագույն (չափսը՝ 16x20): Բոլոր տետրերը լինեն լուսանցքներով: Գրիչ-գնդիկավոր կապույտ միջուկով 2 հատ, սև մատիտ գրաֆիտե միջուկով 1 հատ, նկարչական ալբոմ 1 հատ, գունավոր մատիտների 1 տուփ (տուփի մեջ 12 հատ): Ջրի շիշ մանկական՝ պլաստմասե, տարողությունը 500մլ, հնարավոր գունային հավելումներով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Айк и Нарек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/162 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |